ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1949 *Общественные науки*

Գրիգոր Գրիգորյան

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործությունները իրենց ազգային հատկանիշներով միմյանցից տարբերվելով հանդերձ՝ մի շարք կողմերով նման են։ Այդ նմանությունը կամ ընդհանրությունը առանձնապես արտահայտվում է՝ խորը հնում՝ բնության ուժերից մարդու ունեցած կախման ու նրանց վրա իշխելու ձգտման մեջ, իսկ դասակարգային հասարակության մեջ ստրկական տանջալից աշխատանքի թեթևացման և, որ կարևորն է, ժողովրդի ազատասիրական ձգտումների և ներքին ու արտաքին հարստահարիչների դեմ մղված տևական ու համառ կռվի դրսևորման մեջ։ Մեծ է եղել ու է՛ ժողովրդական բանահյուսության սոցիալական ֆունկցիան բոլոր ժամանակներում։ Նա ժողովրդի անցած պատմական ճանապարհի, նրա վիճակի, մտածողության, լավագույն ապագայի նկատմամբ ունեցած երազի, բնության տնսանձ ուժերի ու ամեն գրչնի հարստահարիչների դեմ մղված դարավոր կռվի հարազատ արտացոլումն է։ Նա մեծագույն ուշադրությամբ հետևել է պատմական դեպքերին ու դեմքերին և տվել նրանց այն գնահատականը, որը սրամագծորեն տարբերվում է ֆեոդալական ու բուրժուական պատմագիրների հայտնած կարծիքներից։ «Ֆոլկլորը ամենահին ժամանակներից անբաժան և յուրահատուկ կերպով ուղեկցում է պատմությանը։ Նա իր կարծիքն ունի Լյուդովիկոս 11-րդի, Իվան Գրոզնու գործունեության մասին, և այդ կարծիքը խիստ տարբեր է մասնագետների դրած պատմության գնահատականից, մասնագետներ, որոնք այնքան էլ չեն հետաքրքրվել այն հարցով, թե հատկապես ինչ է մտցրել աշխատավոր ժողովրդի կյանքի մեջ միապետների պայքարը ֆեոդալների դեմ» (Գորկի)։

Այսպիսով, ֆոլկլորը անգնահատելի հարուստ նյութ է տալիս ժողովրդի կյանքի և հարստահարիչների դեմ մղված դարավոր պայքարի ճշգրիտ պատմության համար։ Ավելին՝ «չի կարելի գիտենալ աշխատավոր ժողովրդի բուն պատմությունը,— գրում է Գորկին,— առանց գիտենալու ժողովրդական բանավոր ստեղծագործությունը»։

Իր սոցիալ-քաղաքական շեշտված ֆունկցիայով ֆոլկլորը ժողովրդի համար դարձել է նաև պայքարի հզոր զենք։ Նրա մեջ խիստ որոշակիությամբ և գեղարվեստական անթերի կատարմամբ դրսևորվել է երկու դիմ՝ հաստատելու և ժխտելու գիծը։ Բոլոր նրանք, որոնք հանդես են եկել որպես կատարյալի ու առաջադիմականի, հայրենիքի և ազատության թշնամիներ՝ արժանացել են ժողովրդի խոր ատելությանը, սպանիչ սարկազմին և իդեապես ժխտվել են։ Իսկ ընդհակառակը, նրանք, որոնք անձնվիրաբար ծառայել են ժողովրդին, պայքարել են նրա փայփայած երազի (ազատության) իրականացման և հայրենիքի անկախության համար՝ արժանացել են ժողովրդի անսահման սիրուն, նրա իգական-էմոցիոնալ հաստատմանը։ Դրա հետևանքով նրանք իդեալականացվել, առասպելացվել են և դարձել այնպիսի անմահ ու

կատարյալ կերպարներ, ինչպես Հերկուլեսը, Պրոմեթեոսը, Միկուլա Սելյանինովիչը, Սվյատոգորը, Սասունցի Դավիթը, Մհերը և այլն։ Սրանց ստեղծման մեջ ներդաշնակորեն զուգակցվել են միտքն ու զգացումը, ժողովրդի դարավոր կենսափորձն ու հոգևոր վիթխարի հարստությունը։ Մտքի ու զգացումի իսկական զուգակցումը, որ կատարելապես դրսևորվեց մեզ մոտ, մեր գարում, երբ ժողովուրդն ինքը դարձավ իր կյանքի ու հայրենիքի տերը և անմիջականորեն մասնակցեց «իրականության ստեղծագործման աշխատանքին, կյանքի նորացման պայքարին» (Գորկի), տվեց արվեստի սքանչելի նմուշներ։ Դրանով է բացատրվում այն նշանակալից փաստը, որ ժողովուրդը մեր օրերում, իր ստեղծագործության մեջ Լենինին ու ընկեր Ստալինին նախ հասցրեց էպիկական հերոսներին հավասար հերոսների աստիճանին և ապա անհամեմատ բարձրացրեց նրանցից։

Ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ, միշտ էլ սոցիալական կյանքը արտացոլվել է գեղարվեստական լայն ընդհանրացումներով։ Այդ են հաստատում հայ ֆոլկլորի ստեղծած գեղարվեստական կերպարները՝ Հայկից մինչև Դավիթը, կերպարներ, որոնք իրենց մեջ խտացրել են այս կամ այն ոչ որոշակի սահմանազատված դարաշրջանն իր հուզող հարցերով, ժողովրդի բողոքն ու ընդվզումը, նրա հզորությունը և հանդես եկել կամ ժողովրդի անունից կամ որպես ժողովուրդ։ Այդ են հաստատում հայ ֆոլկլորի տարբեր ժանրի բազմաթիվ կոթողները, որոնք հարազատորեն արտացոլում են ժողովրդի վիճակը ու նրա ուսերին նստած տերերի կործանարար վարքագիծը։ Եվ եթե մի քանի խոսքով տալու լինենք հայ ժողովրդի մինչ հոկտեմբերյան ֆոլկլորի ընդհանուր բնութագիրը, կարող ենք ասել, որ նրանում երբեմն հնչող հուսետեսության նոտաների հետ միասին, ժողովրդի ստրկական վիճակի ֆոնի վրա խրոխտ ու համարձակ հնչել է սոցիալական բողոքի ձայնը և ներքին ու արտաքին հարստահարիչների վրա բարձրացրած ամենազոր «Թուր կայծակի» զրնգոցը։ «Թուր կայծակին» փայլատակել է հայ ժողովրդի բոլոր դարաշրջանների բանավոր ստեղծագործության մեջ, իդեապես իմաստավորել է այն, տալով նրան հարատևելու ուժ և զարգացման հեռանկարներ։ Սրանով է բացատրվում իր դարավոր երազին (ազատությանը) հասնելու հայ ժողովրդի այն անկոտրում հավատն ու գալիքի նկատմամբ ունեցած պայծառ լավատեսությունը, որոնք դրսևորված են մինչ հոկտեմբերյան շրջանի հայ ֆոլկլորում և կազմում են նրա կենսունակության հիմքը։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի հաղթանակը նոր դարագլուխ է բացում բազմաչարչար հայ ժողովրդի պատմության մեջ։ Նա արմատապես փոխում է ժողովրդի կյանքը և նրա ստեղծագործության բովանդակությունը։ Հայկական ֆոլկլորը թևակոխում է իր պատմական զարգացման նոր, աննախընթաց էտապը՝ սովետական էտապը, որն արտահայտվում է՝ ա) ստեղծագործության բազմազան բովանդակության և ձևի մեջ, բ) Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի շնորհիվ վերածնված հայ ժողովրդի նոր կյանքի ու պայքարի դրսևորման մեջ, գ) ստեղծագործության խորը գաղափարականության և քաղաքական հագեցվածության մեջ, դ) սոցիալիզմի հաղթական ավարտն ու կոմունիստական հասարակության կառուցման համար գործադրվող հերոսական ջանքերն արտացոլելու մեջ, ե) Սովետական Միության ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղվող կռիվը, ինչպես նաև Սովետական Միության Հայրենական

Մեծ պատերազմում՝ գերմանական ֆաշիզմի ջախջախման գործում մեր ժողովրդի ցուցաբերած անօրինակ հերոսության և սովետական ջերմ հայրենասիրության մեջ, գ) Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի հանճարներ և հայ ժողովրդի նոր հերոսներ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի հերոսական կյանքն ու գործը աննախընթաց խանդավառությամբ և վարպետությամբ դրսևորելու մեջ։

Հերոսը. նրա կյանքի ու գործի պատկերումը նախահոկտեմբերյան հայ բազմադարյան ֆոլկլորի հիմնական թեմաներից մեկն է։ Իր պատմության մռայլ էտապներում, մահու և կենաց անհավասար կռիվներում, հայ ժողովուրդը անմահացրել է իր համար ընկած հերոսներին, դարձնելով նրանց իր իղձերի ու մտորումների մարմնացումը, իր ազատագրական դարավոր կռվի և գալիք լավագույն կյանքի դրոշը։ Սակայն անցյալ ֆոլկլորի փառաբանված հերոսներից և ոչ մեկը չիրականացրեց նրա իղձերը, չբերեց և չէր էլ կարող բերել բռնադատված Հազարան բլբուլին (Ազատությունը)։ Հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության անցյալի հերոսները (Հայկ, Վահագն, Դավիթ, Մհեր և այլն) եղել են նրա ցանկությունների ավելի գեղարվեստական մարմնացումը, քան իրական-պատմական դեմքեր, քան ժողովրդի իղձերն իրականացնողներ։ Այս տեսակետից սովետահայ ֆոլկլորի հերոսները՝ Լենինը և Ստալինը իրենց իրական-պատմական և գեղարվեստական բնութագրով նոր երևույթ են։ Ճիշտ այնպես, ինչպես հայ ժողովրդի կյանքի վճռական. արմատական շրջադարձի, տնտեսության և կուլտուրայի բոլոր ճյուղերի առաջընթացի տեսակետից՝ նրա 29 տարվա պատմությունը զարգացման նոր աննախընթաց էտապ է, թռիչք, անցյալ տասնյակ դարերի պատմության համեմատությամբ։ Այսպիսով, որքան տարբեր են հայ ժողովրդի անցյալն ու ներկան, այնքան էլ տարբեր են նրանց հիմքի վրա բարձրացող ֆոլկլորը և նրա կերտած կերպարները։ Լենինի և ընկեր Ստալինի հերոսական կյանքի ու գործի մասին պատմող երգերի հիմնական առանձնահատկությունը՝ նրանց մեջ դրսևորված գաղափարական նոր բովանդակությունն է, նպատակի պարզորոշությունը և հերոսի նոր ըմբռնումը։ Ընկեր Ստալինը ժողովրդի հետ ապրող և նրա պայքարը ղեկավարող իրական-պատմական հերոս է և որպես այդպիսին իր մեջ մարմնավորում է, ինչպես այն բոլոր առաջավորն ու առաջադիմականը՝ ինչ ստեղծել է մարդկային միտքն իր պատմության հազարամյակներում, այնպես էլ այն պայծառ ապագան ու նրան հասնելու միանգամայն գիտական ուղիները, որով ընթանում են Սովետական Միության ժողովուրդները՝ իրենց հետևից տանելով աշխարհի աշխատավոր մարդկությանը։ Ըստ այդ ըմբռնման՝ սովետահայ ֆոլկլորի խորապես սիրված հերոս ընկեր Ստալինը հանդես է գալիս դասակարգային շեշտված գործելակերպով, հանճարեղ կանխատեսությամբ, աշխարհը վերափոխող հզոր ուսմունքով և համաշխարհային-պատմական մեծ միսիայով։ Այդ պատճառով էլ ընկեր Ստալինը դարձել է Սովետական Միության բոլոր ժողովուրդների ազգային հերոսը, խորապես հարազատ աշխարհի ազատատենչ բոլոր ժողովուրդներին։ Հերոսի այդ նոր ըմբռնումը պայմանավորված է ամենառևոլյուցիոն դասակարգի՝ բանվոր դասակարգի պատմական ասպարեզ իջնելու փաստով, Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի համաշխարհային-պատմական հաղթանակի շնորհիվ մեր ժողովրդի կյանքում կատարված արմատական, վճռական շրջադարձով, հայ ժողովրդի քաղաքական-դասակարգային գիտակցության նոր

աստիճանով և կոմունիզմի կառուցման գործում Սովետական Միության ժողովուրդների՝ այդ թվում նաև հայ ժողովրդի ձեռք բերած աննախընթաց նվաճումներով։

Սովետահայ ֆոլկլորում ընկեր Ստալինի հերոսական կյանքի ու գործի մասին պատմող երգերի ցիկլը բազմազան է ու բազմաբովանդակ։ Ստեղծագործ հայ ժողովուրդը այդ երգերում դրսևորում է ընկեր Ստալինի հերոսական կերպարը և խանդավառ երգում նրան՝ ի հատուցումն այն բոլորի, ինչ տվել է նա կործանման եզրին կանգնած հայ ժողովրդին։ Սովետահայ ֆոլկլորում ընկեր Սաալինը հանդես է գալիս նախ և առաջ, որպես հայ ժողովրդի մեծ ազատարար։ Դառն է եղել հայ ժողովրդի պատմական ճակատագիրը։ Նա դարեր շարունակ տնքացել է օտար և հայրենի տերերի դաժան լծի տակ, ապրել է հայրենի հողի վրա, բայց բռնադատված ու ենթակա ցարիզմի, գերմանական, անգլո-ամերիկյան իմպերիալիզմի և վերջիններիս լակեյ դաշնակ մաուզերիստների անսանձ կամայականություններին։ Այդ գիշատիչներն իրենց մագիլների մեջ հոշոտում և դաժանորեն քամում էին ժողովրդի արյունը, աստիճանաբար իրականացնելով նրա վերջնական բնաջնջման իրենց ստոր, մարդակերական պլանը։

Հայ ժողովրդի կյանքի այդ օրհասական պահին, հանդես է գալիս ընկեր Ստալինը, փրկում է նրան ֆիզիկական բնաջնջումից, տալիս է ազատություն, ազատ հայրենիք և դրանով իսկ իրականացնում ժողովրդի փայփայած դարավոր երազը։ Ժողովուրդը, ժողովրդի երգիչները խորապես ըմբռնելով «ստալինյան արշալույսի» կենսաբեր նշանակությունը, Ստալինի դերը կեղեքված, մահամերձ հային փրկելու և «խրճիթներին խաղաղություն» բերելու գործում, ստեղծագործական նոր թափ ստացած նրա խանդավառ գովքն են անում («Օխտն ախպերը», «Երկու իմաստուններ», «Ստալինը բնական ուժերի հետ», «Բարև էրեք» և այլն)։ Այդ հեքիաթներն ու երգերը, հատկապես «Բարև էրեք»-ը հայ ժողովրդի ապրած տառապանքների և «Ումուդ» Ստալինի ձեռքով ազատագրվելու պատմության սեղմ, գեղարվեստական շարադրանքն է։ Հարազատորեն արտահայտելով ընկեր Ստալինի նկատմամբ հայ ժողովրդի ցուցաբերած երախտագիտության խոր զգացումը, կոլխոզնիկ Առաքելը երգում է՝

Մոսկովի յան թռնող անուշ կռունկներ,
Քաղցր Ստալինին շատ բարև էրեք.
Ղամ-ղուսից ազատված Կովկաս դիարից
Հնգեր Ստալինին շատ բարև էրեք։
Էն որ մեզ ազատեց Նիկոլի տուրքից,
Դաշնակ մուսավաթի կոտորող զորքից.
Ախպերացած քրդից, հայից ու թուրքից
Ումուդ Ստալինին շատ բարև էրեք։
Բարև էրեք զմեն միլաթից, էլից,
Ընդուր, որ մեզ ազատեց գազանից, դելից,
Քյավառեցի կոլխոզնիկ Առաքելից
Ջոմարդ Ստալինին շատ բարև էրեք։[1]

[1] Այս և հաջորդ բոլոր մեջբերումները վերցված են «Ստալինը սովետահայ բանահյուսության մեջ» (ԳԱ Հրատարակչություն, 1949 թ.) ժողովածուից և Գրականության Ինստիտուտի ժող. բանահյուսության սեկտորի հավաքած անտիպ նյութերից։

Սովետահայ ֆոլկլորի ստալինյան ցիկլի հաջորդ մոտիվը ազգերի ստալինյան համերաշխությունն է։ Ցարիզմը՝ իր կարգերը անխախտ պահելու և ժողովուրդների՝ իր դեմ ուղղված ցասումը կանխելու նպատակով՝ ազգային ատելություն էր բորբոքում նրանց մեջ և ստեղծում ազգամիջյան անընդմեջ, արյունահեղ ջարդեր։ Ցարիզմի տապալումով և Հայաստանում Սովետական կարգերի հաստատումով վերջ է դրվում այդ եղբայրասպան պատերազմներին։ «Ախպերանում են» հայը, քուրդը, ադրբեջանցին, վրացին և մյուս ազգերը։ Դրա մեջ հայ ժողովուրդը տեսնում է ընկեր Ստալինի հզոր ձեռքը և իրավամբ նրան համարում է «ազգերի եղբայրության մեծ ստեղծարար»։ Վերացնելով ազգային կոտորածների արմատը ցարական-կապիտալիստական կարգերը, սովետական իշխանությունը տալիս է նրանց զարգանալու պայծառ հեռանկարներ։ Սովետական Միության մեծ ընտանիքում փոքր ազգերի ներգրավումը, նրանց խաղաղ և ստեղծագործ աշխատանքի ապահովումը, հայ ժողովուրդը դիտում է իբրև համաշխարհային-պատմական խոշոր ակտ, «ժողովրդից միշտ անբաժան քաղցր» Ստալինի հայրական հոգատարության արգասիք։

Սեր ու սավդի հիմքը դրիր,
Բոլոր ազգերին սիրեցիր,
Ընդունց թամուզ ախպերացրիր
Հունց մե տուն, օջախ, Ստալին։

Ազգերի համերաշխությունը դրվատող երգերում, այնուհետև, ընկեր Ստալինը հանդես է գալիս իբրև ժողովրդին կյանք տվող արև և ազգերի եղբայրության «հմուտ ղեկավար»։

Դու ես մեզ կյանք, արև տալիս,
Անշամանդազ հայր Ստալին,
Բոլոր ազգերի եղբայրության
Հունց մե տուն, օջախ, Ստալին։

Ազգերի ստալինյան համերաշխության մոտիվը տիրաբար հնչում է ընկեր Ստալինի հերոսական կյանքն ու գործը դրսևորող և բարձր գնահատող գրեթե բոլոր երգերում։

Պետք է նկատել, որ ամեն անգամ, երբ խոսք է լինում ժողովուրդների ազատագրման և ազգերի համերաշխության մասին, հայ ժողովուրդը օրգանական կապ է ստեղծում Լենինի և ընկեր Ստալինի միջև։ Այս տեսակետից շատ բնորոշ է ցարական-կապիտալիստական կարգերի տապալումը և Լենինի ու նրա «մեկ սիրտ, մեկ հոգի» քանակի կռիվը պատկերող «Լենին հսկա» վիպերգը, որտեղ ընկեր Ստալինը հանդես է գալիս նրա զորքի առաջին և ամենամեծ զորավարը։ Ընկեր Ստալինին նվիրված սրտառուչ երգերում ժողովուրդն ավելի որոշակի ու բազմակողմանիորեն է նշում երկու հանճարների միջև եղած կապը։ Ըստ այդ կապի ընկեր Ստալինը հանդես է գալիս որպես Լենինի «լավ աշակերտ», նրա մեծ գործի շարունակող, ժողովրդի անձնուրաց պաշտպան, այսօրվա Լենին։ Ժողովուրդը դիմելով Լենինին՝ ասում է՝

Քո տեղը կանգնած է ընկեր Ստալին,
Ժողովուրդն է ընտրել ամենալավին։

Կամ՝

Հանճարեղ հիասքանչ դու մեծ գիանական
Մեր մեծ Լենինին իսկ և իսկ նման։

«Ընկեր Ստալինին», «Ստալինն», «Խորհրդային պաշտպանն» և մի շարք ուրիշ բանաստեղծություններում, ժողովուրդն իր աչքի առջև կատարված իրական փաստերից հանգում է այն եզրակացության, որ ընկեր Ստալինը «ճշմարտությամբ տանում է բոլշևիկյան գիծ», բարձր է պահում Լենինի դրոշը, դրսևորելով իրեն իբրև «կոմկուսի» լենինյան պողպատե ղեկավար։

Լենինի դրոշը պահեցիր բարձր
Հաստատ, որ պողպատ ես պողպատից կարծր։

Ժողովրդական երգիչները խորապես գիտակցում են, որ ընկեր Ստալինի գործունեության ելակետը ժողովուրդն է, նրա շահը, նրա ապագան։ Այդ նույն ոգով ընկեր Ստալինը դաստիարակում է նաև պարտիան։ Եվ նրանք, որոնք շեղվում են այդ գծից և կամ հակադրվում նրան, արժանանում են ընկեր Ստալինի անողոք հարվածներին։ Բանահյուսության մեջ խոր արձագանք է գտել մեր պարտիային ու ժողովրդին հակադրվող, նրանց ոխերիմ թշնամիներ տրոցկիստների և մյուս բանդաների ջախջախումը։ Այդ ջախջախումը պատկերող մի շարք երգերում, ժողովուրդը գովերգում է ընկեր Ստալինի ամենակարող «բազուկը» և համարում իր թշնամիների «քոքը» կտրող հերոս։

Փշում էր բուրժուի քամին,
Տրոցկին էր մեր թշնամին,
Նման հակաների քոքը
Խսպառ կտրեցիր, Ստալին։

Ժողովուրդը տրոցկիստների և մյուս հակալենինյան, հակաժողովրդական բանդաների ջախջախման հետ է կապում նաև կուլակի, որպես դասակարգային թշնամու լիկվիդացիան և գյուղի կոլեկտիվացումը։ Վերջին մոտիվը նույնպես մեծ տեղ է գրավում սովետահայ ֆոլկլորի ստալինյան ցիկլում։ Եվ դա հասկանալի է։ Հայ ժողովուրդը ֆիզիկական բնաջնջումից փրկվելուց կարճ ժամանակ հետո հասնում է իրոք ուրախ ու երջանիկ կյանքի։ Կուլակության որպես դասակարգի ջախջախումով և կոլխոզների կազմակերպումով նոր, աննախընթաց էտապ է սկսվում հայ ժողովրդի կյանքում։ Ժողովուրդն այստեղ տեսնում է ընկեր Ստալինի մեծ հանճարը, նրա խոր ժողովրդասիրությունը և իր ստեղծագործության նյութ դարձնում այդ նոր հզոր կոիվը, որը ղեկավարում է «ամեն զարգացման պատճառ» «պողպատե մարդը»։

Կուլակին էրիր,
Երկրից քերիր,
Մեզ նոր կյանք բերիր
Ազիզ Ստալին։

Կոլխոզային կարգի ստեղծումը արմատապես փոխում է սովետական գյուղի պատկերը։ Կոլխոզը դառնում է «հեղեղի նման առատ բերքի աղբյուր»։ «Առատության գետն է հոսում» կոլխոզից, կոլխոզնիկի տնից, «շեն» գյուղերից։ Ժողովրդի կեցությունը փոխում է նրա գիտակցությունը։ Կոլխոզնիկները դառնում են կոլխոզի անձնուրաց պաշտպան և աշխատանքային սխրա-

գործության օրինակներ են տալիս։ Քաղաքական նոր, ավելի բարձր գիտակցության հասած հայ ժողովուրդը խորապես գիտակցում է, որ այդ բոլորի համար նա պարտական է մեծ առաջնորդին, «կոլեկտիվ նոր կյանքի վարպետին»։ Այստեղից էլ այն սրտաբուխ, ջերմ, իդեական-էմոցիոնալ մեծ ուժ ունեցող երգերի շարքը («Անուշ օրեր», «Առատություն», «Ստալինի կոլխոզը», «Կոլխոզը արին ա», «Ազատության լույս» և այլն), որտեղ գովերգվում է ընկեր Ստալինը, որպես առատության աղբյուր, «մեր ծաղկած երկրի մեծ այգեպան» և «դարեր շողացող պայծառ արև»։

Մեծ Ստալին, գարեր ապրես,
Դարեր շողա արևը քեզ,
Ժողովուրդը քեզնով հպարտ
Երջանիկ է ու միշտ անպարտ։
Անուշ օրեր,
Ուրախ տարի,
Արևը վառ
Մեր աշխարհի։

Մեր ժողովրդի համար Ստալինի անունը ամենանվիրական անունն է, նրա երջանիկ ու խաղաղ կյանքի սիմվոլը։ Ստալինը մեր սովետական կյանքի երեկն է, այսօրն է և ապագան— ահա ժողովրդի գնահատականը, մեծ առաջնորդի հերոսական գործի ու կերպարի ճշմարտացի ու խոր ընկալումը։ Շատ բնորոշ է, որ ժողովուրդը չի բավարարվում միայն խանդավառ երգով. այդ քիչ է համարում այն բոլորի դիմաց, ինչ տվել է առաջնորդը։ Այդ պատճառով. որպես շնորհակալության ամենախոր արտահայտություն, «կոլխոզն հորինողին» սրտառուչ երգերի հետ միասին «դուրբան» է անում և իր ջանը։

Հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ երգում է նաև սովետական Կոնստիտուցիան՝ «Ստալինի դրած օրենքը», «Ստալինյան մեծ օրենքը», որովհետև այն բարձր է կանգնած աշխարհի բոլոր օրենքներից, պաշտպանում է աշխատավոր ժողովրդի շահերը և նայում է դեպի ապագան։ «Ստալինին», «Ստալինի զեկուցումը», «Ստալինյան օրենքը» և մի շարք այլ բանաստեղծություններում ժողովրդական երգիչները ճշտությամբ նշում են կուլտուրայի, գիտության ու տնտեսության բնագավառում սովետական ժողովրդի ձեռք բերած աննախընթաց նվաճումները և վեր հանում «մեծ օրենքի» խոր դեմոկրատիզմը։ Նրանք Ստալինյան Կոնստիտուցիան համարում են մեր հայրենիքի «ալ պսակը», որի «ամեն մի տառը» անհանգչելի վառ կրակ է, «ժամանակի դարերի» մեջ։

Հայրենիքիս ալ պսակն է ստալինյան մեծ օրենքը.
Պսակի անգին ակն է, ստալինյան մեծ օրենքը,
Փայլում է ամեն մի տառը ժամանակի դարերի մեջ.
Անհանգչելի վառ կրակ է ստալինյան մեծ օրենքը։

Ստալինյան մեծ Կոնստիտուցիան ինչքան ուրախություն է պատճառում Սովետական Միության ժողովուրդներին, թև ու թռիչք տալիս նրանց նոր հաղթանակների համար, այնքան էլ զայրացնում է «չար թշնամուն», բորբոքում նրա վրեժը։ Այս, սակայն, չի վախեցնում ժողովրդին։ Նա այն խոր համոզմունքին է, որ անհնար է կանգնեցնել «ստալինյան օրենքով» համա-

խրմբված ժողովուրդների առաջընթացը, ինչպես փորձեց այդ անել ֆաշիզմը։ Ֆաշիզմի ջախջախման մեջ ժողովուրդը տեսնում է ստալինյան «մեծ օրենքի» ամենահաղթ ուժը։

Ու ջարդել ենք սև ֆաշիզմը մեր ամրակուռ պողպատ թրով
Թշնամու սրից ուժեղ է ստալինյան մեծ օրենքը։

Ֆաշիզմի ջախջախումը և սովետական ժողովուրդների հաղթանակը ֆոլկլորում ևս գնահատվում է իբրև համաշխարհային-պատմական մեծ հաղթանակ, սերտորեն կապված ընկեր Ստալինի անվան հետ։ Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմին վերաբերող երգերում ընկեր Ստալինը հանդես է գալիս որպես մեծ զորավար, փառաբանված հերոս, Սովետական Միության և աշխարհի աշխատավոր ժողովուրդների փրկիչ։ Հայ երգիչների կողմից ընկեր Ստալինի զորավարական հանճարը և նրա «Սուր ու դանակ» Կարմիր Բանակը գովաբանվել է դեռևս քաղաքացիական պատերազմների մասին հորինված երգերում («Ստալինի նման», «Երգ առաջնորդի մասին» և ուրիշներ)։ Հայ ժողովրդի մեծ ազատարարը այս անգամ ևս ազատում է նրան գերմանական ջարդարարներից։ Այս իմաստով գերմանական ֆաշիզմի դեմ Սովետական Միության տարած հաղթանակը հայ ժողովուրդը դիտում է իբրև իր երկրորդ վերածնություն։ Հայրենական մեծ պատերազմին վերաբերող երգերում երգիչները ջերմ սիրով ու նվիրական զգացմունքներով երգում են ժողովուրդների պաշտպան ընկեր Ստալինին ու նրա բանակը, և ընդհակառակը, խոր հակակրանքով ու ատելությամբ նզովում ժողովուրդների թշնամի «ցնդած ավազակ» Հիտլերին ու նրա ոհմակը։ Երգիչները, այնուհետև ցույց են տալիս Սովետական ժողովրդի ստալինյան միասնությունը, հաղթանակի նկատմամբ նրանց ունեցած հավատը, սովետական ջերմ հայրենասիրությունը։ Մի շարք երգերում («Ովքեր են գալիս», «Մեծ զորավարը», «Ստալին ջան քո քաղաքը» և այլն) մանրամասն պատկերելով ընկեր Ստալինի հերոսական կերպարը, ցույց են տալիս նրա կատարած համաշխարհային-պատմական մեծ միսիան՝ Սովետական Միությունը և ապա ամբողջ աշխարհը հիտլերյան մարդակերներից փրկելու գործում։ Այս տեսակետից չափազանց պերճախոս է «Ստալին ջան քո քաղաքը» բանաստեղծությունը, որտեղ գուսանը պատմում է Ստալինգրադում հիտլերյան զորքերի ջախջախման մասին, դիտելով այն որպես ընկեր Ստալինի զորավարական հանճարի արդյունք։

Ողջ աշխարհին զարմացրեց, Ստալին ջան, քո քաղաքը,
Քաջերով հրաշք գործեց, Ստալին ջան, քո քաղաքը,
Ֆաշիստներին ջարդեց, ջնջեց, Ստալին ջան, քո քաղաքը,
Հաղթանակով գերազանցեց, Ստալին ջան, քո քաղաքը։

Կարմիր Բանակը քաջարի կռվեց առյուծի նման,
Հայրենիքը կրծքով փրկեց ամուր ամրոցի նման,
Ջար թշնամուն վառեց, թողեց կայծակի բոցի նման,
Հիտլերի օջախը մարեց, Ստալին ջան, քո քաղաքը։

Սովետահայ ֆոլկլորի ստալինյան ցիկլի հաջորդ մոտիվը՝ հետպատերազմյան Ստալինյան հնգամյակն է ու դրա հետ կապված աշխատանքային նոր սխրագործությունը։ Խորապես ըմբռնելով «Ստալինյան մեծ պլանի» դերն ու

նշանակությունը պատերազմից ստացած վերքերը բուժելու և երկրի կուլտուրական ու տնտեսական հզոր վերելքի գործում, ժողովրդական երգիչները «ամեն բանով պատվական» են համարում այն։ Ժողովուրդը հանդես է բերում կամք ու հավատ ստալինյան հնգամյակը կատարելու համար։ Ոգեշնչված մեծ առաջնորդով՝ սովետական հերոս ժողովուրդը հնգամյակը կատարում է ժամկետից շուտ. «սովետը հզորացնում է գործարաններով», դարձնելով ամուր ու անխախտ նրա հիմքերը։ Այս ստեղծագործ աշխատանքի լայն արձագանքն ենք գտնում հետպատերազմյան ստալինյան հնգամյակը գովերգող մի շարք երգերում, հնգամյակ, որը ներկայանում է, որպես բնությունը վերափոխող և անգամ քարերը ծաղկեցնող «ստալինյան մեծ օրենք»։

Ս ե ր ավերված քաղաքները,
Կնորոգեն մեր ձեռքերը,
Կծաղկեն անգամ քարերը
Հնգամյակի նոր օրենքով։

Ֆոլկլորի մեջ ավելի ու ավելի լայն արձագանք է գտնում մեր առաջընթացի հիմքը կազմող համաժողովրդական աշխատանքային սխրագործությունը և նորարարությունը, որի ոգեշնչողը ընկեր Ստալինն է։ Սովետական մարդիկ հանուն Ստալինի, ինչպես հրաշքներ էին գործում Հայրենական պատերազմում, այնպես էլ հանուն Ստալինի հրաշքներ են գործում աշխատանքային ֆրոնտում, կոմունիզմի կառուցման ֆրոնտում։ Նրանք ջարդում, փշրում են բոլոր նորմաները թե գործարանում և թե կոլխոզում, բերելով իրենց հետ նոր հասարակության շունչը աշխատանքի բարձր արտադրողականություն, առատություն։

Ամբարները բերք ու բարով լցրել ենք,
Բոլոր տեսակ նորմաները անցել ենք։

Այս նոր երևույթ է, ինչպես մեր կյանքում, այնպես էլ ֆոլկլորում, որպես այդ կյանքի հայելին։ Այս Լենինի-Ստալինի ամենահաղթ ուսմունքով մեր ժողովրդի գիտակցության մեջ խորը արմատավորված և արդեն կենցաղ դարձող կոմունիզմն է՝ անխզելիորեն կապված ընկեր Ստալինի անվան հետ։ Մեր մարդիկ պլանները կատարում են հանուն ընկեր Ստալինի՝ «Ստալինին խոսք տվինք ութսուն ցենտներ բերք քաղինք», Մոսկվա, ընկեր Ստալինի մոտ են գնում, որովհետև սահմանում են պլանների կատարման նոր ռեկորդներ։ Այսպիսով ընկեր Ստալինը հանդես է գալիս որպես աշխատանքային հերոսության աղբյուր, դեպի այն մղող հզոր ուժ և կոմունիզմի կառուցման սիմվոլ։

Ժողովրդական երգիչներն ու գուսանները ընկեր Ստալինին համարում են կոմունիզմի մեծ ճարտարապետ՝ «ողջ աշխարհի լուսաբաց»։ Ընկեր Ստալինի անվան հետ է կապվում նաև աշխարհի տանջված ժողովուրդների ազատագրումը։ «Ինչպես մեզ փրկեցիր, այլոց էլ փրկիր», հուզված բացականչում են երգիչները և արտահայտում կապիտալի լծի տակ տառապող մարդկանց ազատասիրական ձգտումները։ Ընկեր Ստալինին պատկերում են որպես մի աշխարհ, որը նոր կյանք է տալիս աշխարհներին, նրա բանակը համարում են աշխարհաշեն, նրա յոթանասուն տարիները՝ չարիքի դեմ մղված կռվի յոթանասուն դար։ Ջախջախելով ֆաշիզմը, ընկեր Ստալինը հզորացրեց Սովետական Միությունը և ստեղծեց բարեկամ նոր երկրներ։ «Այժմ նոր լույսով են

գործում ժողովուրդներն աշխարհի», բոլոր ճանապարհները տանում են դեպի կոմունիզմ—ահա ընկեր Ստալինի հերոսական կյանքի ու գործի մասին պատմող երգերի իդեական եզրակացությունը։ Որպես օրինակ՝ հիշենք գուսան Աշխույժի «Ստալինը և աշխարհը» բանաստեղծությունը։

Ստալինը մի աշխարհ է, աշխարհին նոր կյանք տալու մեջ,
Աշխարհաշեն իր բանակով, նա աշխարհի սիրտն է անվերջ.
Նրա շնչով ու հանճարով, Լենինի դրոշով վառ ու անշեջ
Պիտի փրկվեն կապանքներից բոլոր ազգերը աշխարհի։
Յոթանասուն տարիներում, յոթանասուն դարից էլ շատ
Պայքարել է չարիքի դեմ, պողպատ կամքով իր անվհատ,
Ֆաշիստական բարբարոսը օդը ցնդեց կորավ անհայտ,
Այժմ նոր լույսով են գործում ժողովուրդները աշխարհի։

Հայ ժողովուրդը ընկեր Ստալինի և նրա «աշխարհաշեն բանակի» հետ է կապում աշխարհի խաղաղության գործը։ Նա վստահում է այդ մեծ գործն իր պողպատե ձեռքը վերցրած առաջնորդին, համարելով նրան իսկական խաղաղասեր, խաղաղության անվեհեր պաշտպան։ Ժողովուրդը գտնում է, որ խաղաղությունը կհաղթանակի, նախ, որ նրա հզոր լագերը ղեկավարում է ընկեր Ստալինը («Կեցցես», «Մագեցիր աշխարհին»). երկրորդ՝ օրեցօր մեծանում է խաղաղության կողմնակիցների բանակը («Ստալին»), երրորդ՝ հզոր է Սովետական Միությունը և միասնական նրա ժողովուրդները։

Մեր գործը հիմքից է ամուր, ինչքան անեն աղմուկ ու վեճ,
Ժողովրդի միությանը հաղթել չի լինի, չի լինի։

Սովետահայ ֆոլկլորի ստալինյան ցիկլի երգերում ժողովուրդն անում է խիստ կարևոր ընդհանրացումներ՝ կապված ընկեր Ստալինի հերոսական կերպարի պատկերման հետ։ Խորապես ըմբռնելով ընկեր Ստալինի կյանքի ու գործի խոր ժողովրդայնությունը՝ ժողովուրդը ընկեր Ստալինի կերպարում տեսնում է իրեն, իսկ իր հերոսական ու երջանիկ առօրյայում ընկեր Ստալինին։ Նշանակալից է այս տեսակետից այն, որ ընկեր Ստալինին չտեսած կոլխոզնիկը «Սովետու արևը» համարում է ընկեր Ստալինի երեսը, «կոլխոզի արտերը» նրա «քաղցր պատկերը», մեր կայտառ մանուկների ուրախ աչքերը՝ ընկեր Ստալինի «քաղցր աչքերը»,— ահա «Ստալին» բանաստեղծության ընդհանրացնող խոր իմաստը։

Քո սուրբ անունդ լսել եմ,
Քո սուրբ երեսդ չեմ տիսե,
Համա, որ կիշկամ սովետու արև
Էդ քո երեսդ ի, հնգեր Ստալին։
Համա որ կիշկամ կոլխոզի արտեր
Էդ քո պատկերդ ի, քաղցր Ստալին։
Կիշկամ էն ուրախ մեր ու մանքուկտեր,
Քաղցր աչքերդ ի, ազիզ Ստալին։

Ստալինյան ցիկլի երգերի հաջորդ օրինաչափ առանձնահատկությունը՝ հայրենիքի, սովետական ջերմ հայրենասիրության գաղափարի և ընկեր Ստալինի անվան նույնությունն է։ Ի տարբերություն իր հին, ճնշված ու անազատ հայ-

բենիքի, հայ ժողովուրդը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի շնորհիվ ստանում է նոր հայրենիք՝ Սովետական հայրենիք, որը աստիճանաբար ձևավորում է նրա մեջ հին հայրենիքի ըմբռնմանը տրամագծորեն հակադիր նոր ըմբռնում։ Ըստ այդ ըմբռնման հայրենիքը ամբողջությամբ պատկանում է իրեն՝ ժողովրդին, նա է նրա իսկական տերն ու տնօրենը։ Պետությունը հայրենիքի և իր շահերը պաշտպանող հարազատ պետությունն է։ Հերոսական աշխատանքով հայրենիքի կերպարանափոխումն ու բարգավաճումը, իրեն՝ ժողովրդի ֆիզիկական ու մտավոր կերպարանափոխումն է։ Եվ վերջապես՝ արտաքին թշնամիներից նրա պաշտպանությունը, իր՝ ժողովրդի պաշտպանությունն է։ Սովետական հայրենիքն անսահման սիրող ժողովրդին թվում է նույնիսկ, որ հայրենիքի պաշտպանության սրբազան պարտքի գիտակցությամբ է լցված «մեր հիմքերի դրած քարը», արտերում հասունացող հասկը և ամբողջ բնությունը, որը վտանգի ժամին պատրաստ է ձայն տալ և «մեկ սիրտ դառած» ժողովրդի հետ ելնել թշնամու դեմ որպես սուր ու կրակ։ Այս տեսակետից բնորոշ է «Ձայն կտա» բանաստեղծությունը։

Եթե տերությունները բանան մեզ հետ վեճ,
Մենք որ խոսենք մեր սարն էլ ձայն կտա,
Պետք է պատասխանենք մենք նրանց հպարտ
Մեր հիմքերի դրած քարը ձայն կտա։

Մենք կանգնած ենք նրանց դեմը համարձակ,
Ունենք սավառնակներ, կատյուշա ու տանկ,
Մեր արտերի հասկն էլ որպես սուր նիզակ
Ոգի առած մեզ հետ կռվի ձայն կտա։

Սահակ-Նովան սազը թրի կփոխի,
Սազի ամեն լարը սրի կփոխի,
Երգը թշնամու դեմ հրի կփոխի,
Ժողովուրդը մեկ սիրտ առած ձայն կտա։

Սովետական հայրենիքի և հայրենասիրության գաղափարը, վերոհիշյալ և մի շարք այլ երգերում («Հավասարը աշխարհում չկա», «Սովետական հայրենիքին», «Կարմիր հայրենիք» և այլն) նույնանում է ընկեր Ստալինի անվան հետ։ Ընկեր Ստալինը հանդես է գալիս որպես «Մեր արևը», «Մեր հայրենիքը»։ Ավելին, ժողովուրդը սովետական հայրենիքի գաղափարը իմաստավորում է մեծ առաջնորդի անունով։ Այս տեսակետից չափազանց բնորոշ է այն նշանակալից փաստը, որ Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմում մեր ժողովուրդը ջախջախում էր ֆաշիստական օկուպանտներին «հանուն հայրենիքի, հանուն Ստալինի» օրգանապես իրար ձուլված լոզունգով. ճիշտ այնպես, ինչպես այժմ, այդ նույն ժողովուրդը կոմունիզմի այս աշխարհաշեն երթում աշխատանքային հրաշքներ է գործում հայրենիքը և ընկեր Ստալինի պանծալի անունը շուրթերին։ Ընկեր Ստալինի անվան հետ է կապվում նաև մեր էպոխան և իրավամբ կոչվում նրա ստեղծողի անունով։

Ստալինյան դարի մեջ ենք,
Երջանիկ աշխարհի մեջ ենք։

Եվ իրոք, մարդը ոչ մի աշխարհում և ոչ մի դարում չի ապրել այնպես ազատ, երջանիկ, և կատարելապես չի դրսևորել իր բազմակողմանի ընդունակությունները, ինչպես մեզ մոտ՝ ստալինյան դարում, որովհետև ոչ մի էպոխա ժողովրդին չի տվել այնպիսի հայրենիք, դրանով հպարտանալու և նրա պատիվը հերոսաբար պաշտպանելու ոգի, ինչպես ստալինյան էպոխան։ Այդ է պատճառը, որ ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ և գուսանների խանդավառ երգերում, ստալինյան էպոխան և ընկեր Ստալինը դարձել են կոմունիզմի կառուցման, առատության, երջանկության, հերոսության, ազատության, հաղթանակի և առաջընթացի սիմվոլներ։

Այստեղից էլ ստալինյան ցիկլի երգերի մյուս բնորոշ առանձնահատկություններ՝ նրանցից հորդող զվարթությունն ու կենսախինդ օպտիմիզմը։ Չկա մի երգ, որի մեջ թեկուզ թույլ կերպով հնչի նախահոկտեմբերյան հայ բանահյուսությաան բնորոշ թախծի մոտիվը։ Նրա ուրախ կյանքի ազդեցության տակ նոր ֆունկցիա է ստացել նույնիսկ վշտի ու թախծոտ կարոտի դարավոր սիմվոլ կռունկը։ Այժմ նրան դիմում են ոչ թե բզկտված ու խավար հայրենիքից «խաբրիկ մր» առնելու, այլ ազատագրված, ծաղկած, «բերքը սարեսար արած» հայրենիքից, նրա երախտապարտ ժողովրդից ու «կոլխոզ դառած շեն գեղերից» մեծ առաջնորդին խանդավառ բարևներ ուղարկելու համար։

Բանձրիկ սիրուն մեր սարերեն
Կոլխոզական մեր հանդերեն
Կայնի կռունկ,
Տար շատ բարև,
Մեծ Ստալինին
Պայծառ արև։
Ալագյազի ծաղիկներից
Կոլխոզ դառած շեն գեղերից
Մեծ Ստալինին
Պայծառ արև,
Կայնի կռունկ,
Տար շատ բարև։
Ասա, թե մեր օրն է ուրախ,
Ունենք սով ու կարիքից վախ,
Կայնի կռունկ,
Տար շատ բարև,
Մեծ Ստալինին
Պայծառ արև։

Գյուղական աշխատանքի բոլոր պրոցեսներին զուգակցվող երգերում («Գութանը հոլ ենք արել», «Առատություն», «Ջալե-Ջորե», «Կոլխոզական երգ», «Աշխատանքային երգ» և այլն) աշխատանքը ներկայացվում է իբրև փառք, երջանկություն և ոչ տանջանք։ Այդօրինակ աշխատանքի մեջ ժողովուրդը տեսնում է մեծ առաջնորդի հերոսական կերպարը և խանդավառ երգում նրան, որպես իր ուրախ կյանքի ու նույնքան ուրախ երգի ստեղծող, որպես «լույս աչքյուր» և «անմահական ջուր»։

Ստալին դու հուր եղար
Հանց լուսի ախպուր եղար,
Պապակ ծարավ արտերին
Անմահական ջուր եղար։

Հայ բազմադարյան ֆոլկլորը իր պատմական զարգացման և ոչ մի էտապում չի եղել այնպես զվարթ ու կենսախինդ, ինչպես սովետական էտապում։ Այդ բացատրվում է նրա պատմական ճակատագրի ու հեռանկարի մեջ կատարված վճռական շրջադարձով, նրա կյանքի այն նոր արշալույսով, որը ժողովուրդը համարում է «Ստալինյան արշալույս»։ Այդ բացատրվում է նրա ներկա հարուստ ու երջանիկ կյանքով և ավելի պայծառ ապագային հասնելու նկատմամբ նրա ունեցած ստալինյան հավատով։ Այս խոր հավատի վրա էլ խարսխված է ընկեր Ստալինի հերոսական կյանքի ու գործի մասին պատմող երգերում դրսևորված օպտիմիզմը, որը ըստ էության նոր, բարձր որակ է նախահոկտեմբերյան ֆոլկլորում դրսևորված օպտիմիզմի համեմատությամբ։ Այդ սովետական օպտիմիզմ է, որն արտահայտվում է մեր առաջընթացն արգելակող դժվարությունների հաղթահարման և պատերազմի հրձիգների դեմ խաղաղության համար մղվող համաժողովրդական պայքարում։ Բոլշևիկների պարտիայի և նրա մեծ առաջնորդ ընկեր Ստալինի շնորհիվ ժողովուրդը գիտե, թե ինչի համար է պայքարում։ Նա վստահ ու համարձակ է նայում ապագային։ Խորապես համոզված է, որ կես ճանապարհին չի կանգնի և ոչ մի թշնամի չի կարող կանգնեցնել իր ընթացքը, որովհետև ունի ընկեր Ստալինի նման «պողպատե առաջնորդ».

Թե՝ աշխարհով մեկ կովի գան
Չեն հաղթի, անհաղթ է տղերք։

և կամ՝

Աշխարհի մեջ քո անունով հաղթանակ ես, հայր Ստալին,
Դարեր ապրող կոմունիզմի դրոշակ ես, հայր Ստալին։

Եվ կամ՝

Նրա շողը սրտում ունի մեր երկրում ամեն մարդ,
Եթե ուզի փուշն անգամ կդարձնի կարմիր վարդ։

Հանուն կոմունիզմի՝ սովետական Երկրի թշնամիներին ծունկի բերող ընկեր Ստալինը ծունկի է բերում նաև հզոր բնությունը— ահա սովետական ժողովրդի օպտիմիզմի աղբյուրը։ Այսպիսով, ստալինյան ցիկլի երգերի և առհասարակ սովետահայ ֆոլկլորի կենսախինդ օպտիմիզմը հիմնված է՝ սովետական ժողովրդի անցած և անցնելիք ճանապարհի ճշտության, ժողովրդի անխորտակ ուժի և նրան հաղթանակից հաղթանակ տանող մեր իմաստուն առաջնորդի նկատմամբ նրա ունեցած վստահության վրա։

Ընկեր Ստալինի հերոսական կյանքի ու գործի մասին պատմող երգերի և առհասարակ սովետահայ ֆոլկլորի օրինաչափ առանձնահատկությունը՝ նրա դաղափարական բարձր բովանդակությունն է։ Որ երգերում ժողովուրդը խոսում է հասարակական-քաղաքական կարևորագույն երևույթների՝ բանվոր դասակարգի և նրա առաջնորդներ Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի և նրանց ուսմունքի մասին։ Հրաժարվելով նախահոկտեմբերյան շրջանի իր

ստեղծագործությանը բնորոշ անախրոնիզմից, նա պատմական մոտեցում է ցուցաբերում ընկեր Ստալինի կյանքն ու գործը դրսևորելիս, նրան համարում է Մարքսի, Էնգելսի, Լենինի մեծ գործի շարունակողը, չորրորդը նրանց «արեզնափայլ չորրորդության» մեջ։ Առանձնահատուկ ուժով ընդգծվում է ընկեր Ստալինի հատկապես Լենինի հետ ունեցած կապը։ Ընկեր Ստալինի անունը միաձուլում են Լենինի անվան հետ («Ստալինին», «Ընկեր Ստալինին», «Ստալին», «Կուզեմ տեսնել», «Խորհրդային պաշտպան» և այլն)։ Մարդկության մեծագույն ազատարարների իդեական միաձուլումը, անտարակույս, վկայում է մեր ժողովրդի մեջ Լենինի-Ստալինի առաջավոր ուսմունքի ձգած խոր արմատների, այն նրա կողմից արագորեն սեփականացվելու և աշխարհը վերափոխող այդ ուսմունքի խոր ժողովրդայնության մասին։ Սրանից էլ բխում է իր թշնամիների նկատմամբ մեր ժողովրդի ցուցաբերած իդեական վերաբերմունքը։ Բնութագրելով ընկեր Ստալինին որպես «կոմունիզմի դրոշակ», «ողջ աշխարհի լուսաբաց» ժողովուրդը դրանով իսկ ժխտում է բուրժուական կարգերն ու նրանց բոլոր պարագլուխներին։ Ժողովուրդն իր գնահատականն ու կարծիքն ունի, ինչպես ցարի, դաշնակների, «Ինդլիզի, Ճապոնի, Ամերիքայի», այնպես էլ արյունկզակ Հեթլերի և պատերազմի ժամանակակից հրձիգների կառավարությունների մասին և այդ կարծիքը համընկնում է նրանց նկատմամբ մեր պարտիայի և կառավարության վարած քաղաքականությանը։ Այս փաստը բացատրվում է ժողովրդի քաղաքական արագ հասունացմամբ և կյանքի նորացման պայքարում նրա ունեցած ակտիվ մասնակցությամբ։

Դեռապես ժխտելով մեր հայրենիքի բոլոր թշնամիներին, հայ ժողովուրդը իր բանահյուսության մեջ աննախընթաց խանդավառությամբ երգում է ընկեր Ստալինին, որովհետև շատ լավ գիտե, թե ինչ է մտցրել իր կյանքի մեջ ցարական կապիտալիստական կարգերի և իմպերիալիստական գիշատիչ պետությունների դեմ Լենինի հետ ընկեր Ստալինի մղած անօրինակ պայքարը։ Նա իր բանահյուսական արվեստի ամբողջ ուժով և ամենանվիրական գգացմունքներով երգում է ընկեր Ստալինին, որովհետև քաջ գիտե, թե ինչ տվեց ներքին թշնամիների և ֆաշիզմի դեմ ընկեր Ստալինի մղած հերոսական կռիվը, որովհետև խորապես գիտակցում է, թե ինչ է տալու Սովետական Միության ժողովուրդներին և աշխարհի ազատասեր մարդկությանը՝ բնության անսանձ տարերքի և պատերազմի նոր հրձիգների դեմ ընկեր Ստալինի գլխավորությամբ մղվող համաժողովրդական կռիվը։ Ահա թե ինչու, ինչպես միշտ, այնպես էլ այսօր, հայ ժողովուրդը Սովետական Միության ազատասեր ու խաղաղասեր բազմամիլիոն ժողովուրդների հետ միասին հայացքը սևեռած մեծ առաջնորդին՝ երգում է՝

Մեր հայր Ստալին,
Կյանքդ երկարի
Թող հազար տարի,
Որ մարդ դարձրիր
Խեղճ ու տկարին,
Որ կյանք բերեցիր
Մեր մութ աշխարհին։